

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1991 թվականի մայիսի 29-ի ՀՐԱՀԱՆԳ (91/322/ԵՏՀ)
Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ազդակների
ներգործության ռիսկից աշխատողների պաշտպանության վերաբերյալ՝ Խորհրդի
80/1107/ԵՏՀ հրահանգն իրականացնելու միջոցով ինդիկատիվ սահմանային
թույլատրելի արժեքներ սահմանելու մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական կամ կենսաբանական ազդակների ներգործության ռիսկերից աշխատողների պաշտպանության մասին» 1980 թվականի նոյեմբերի 27-ի 80/1107/ԵՏՀ հրահանգը (1), որը վերջին անգամ փոփոխվել է 88/642/ԵՏՀ (2) հրահանգով և, մասնավորապես, դրա 8(4) հոդվածի առաջին ենթապարբերությունը,

հաշվի առնելով Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով Խորհրդատվական կոմիտեի եզրակացությունը,

քանի որ 80/1107/ԵՏՀ հրահանգի 8 (4) հոդվածի երրորդ ենթապարբերությամբ նշվում է, որ ինդիկատիվ սահմանային թույլատրելի արժեքները պետք է արտացոլեն գիտական տվյալների վրա հիմնված փորձագիտական գնահատումները,

քանի որ նման արժեքների սահմանման նպատակը այս ոլորտում պայմանների ներդաշնակեցումն է, մինչդեռ դրա ընթացքում պահպանվում են ձեռք բերված բարելավումները,

քանի որ սույն Հրահանգով գործնական քայլ է կատարվում՝ ներքին շուկայի սոցիալական ուղղվածության հաստատման համար,

քանի որ մասնագիտական աշխատանքի ընթացքում ներգործության սահմանային թույլատրելի արժեքները պետք է դիտարկվեն որպես աշխատավայրում աշխատողների առողջության պահպանմանն ուղղված համընդհանուր մոտեցման կարևոր բաղադրիչ,

քանի որ մասնագիտական աշխատանքի ընթացքում ներգործության սահմանային թույլատրելի արժեքների նախնական ցանկ հնարավոր է սահմանել այն ազդակների դեպքում, որոնց համար նմանատիպ արժեքներ առկա են անդամ պետություններում՝ նախապատվությունը տալով այն ազդակներին, որոնք հայտնաբերվել են աշխատանքի վայրում և կարող են ներգործել աշխատողների առողջության վրա. քանի որ այդ ցանկը կարող է հիմնված լինել առողջության վրա ներգործությանն առնչվող առկա գիտական տվյալների վրա՝ չնայած որոշ ազդակների դեպքում նման տվյալները չափազանց սահմանափակ են,

քանի որ, բացի դրանից, մասնագիտական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ կարող է լինել սահմանել ներգործության սահմանային թույլատրելի արժեքներ առավել կարճ

ժամանակահատվածի համար՝ հաշվի առնելով կարճաժամկետ ներգործությունից առաջացող հետևանքները,

քանի որ 80/1107/ԵՏՀ հրահանգն ընդգրկում է ներգործության գնահատման, ինչպես նաև մասնագիտական աշխատանքի ընթացքում ներգործության սահմանային թույլատրելի արժեքների չափման ստանդարտ մեթոդ,

քանի որ, հաշվի առնելով մասնագիտական աշխատանքի ընթացքում ներգործության սահմանային թույլատրելի արժեքների հավաստի չափումներ կատարելու կարևորությունը, կարող է անհրաժեշտ լինել հետազայում սահմանել համապատասխան ստանդարտ մեթոդներ,

քանի որ մասնագիտական աշխատանքի ընթացքում ներգործության սահմանային թույլատրելի արժեքները պետք է մշտապես վերանայվեն և պետք է փոփոխվեն, եթե գիտական նոր տվյալները ցույց են տալիս, որ դրանք այլևս հիմնավոր չեն,

քանի որ որոշ ազդակների դեպքում անհրաժեշտ կլինի հետազայում ուսումնասիրել ներծծման բոլոր ուղիները՝ ներառյալ մաշկի միջով ներթափանցման հնարավորությունը՝ պաշտպանության առավելագույն մակարդակ ապահովելու համար,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են 80/1107/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Ինդիկատիվ սահմանային թույլատրելի արժեքները, որոնք անդամ պետությունները պետք է հաշվի առնեն, երբ նրանք, մասնավորապես, սահմանում են 80/1107/ԵՏՀ հրահանգի 4 (4) (բ) հոդվածում նշված սահմանային թույլատրելի արժեքները, նշված են հավելվածի ցանկում:

Հոդված 2

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ դրույթները մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք դրա մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունները, այդ դրույթներն ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման պահին ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային իրավունքի այն նորմերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հողված 3

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: Կատարված է Բրյուսելում
1991 թվականի մայիսի 29-ին: Հանձնաժողովի կողմից՝

Վաստ ՊԱՊԱՆԴՐԵՈՒ

Հանձնաժողովի անդամ

1) ՊՏ թիվ L 327, 03.12.1980թ., էջ 8 (2) ՊՏ թիվ L 356, 24.12.1988թ., էջ 74:

Թիվ L 177/24

Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագիր

5. 7. 91

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՆԴԻԿԱՏԻՎ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

| ԳՈՒՔՆԵՑ (Einecs) (¹) | CAS գրանցման ն համարը (-) | Ազդակի անվանումը | Սահմանային արժեքներ (²) | |
|-------------------------|------------------------------------|---|----------------------------|-------------------|
| | | | մգ/մ³ (⁴) | մլն ⁻¹ |
| 2 001 933 | 54-11-5 | Նիկոտին (⁶) | 0,5 | — |
| 2 005 791 | 64-18-6 | Մրջնաթթու | ON | 5 |
| 2 005 807 | 64-19-7 | Քացախաթթու | 25 | 10 |
| 2 006 596 | 67-56-1 | Մեթանոլ | 260 | 200 |
| 2 008 352 | 75-05-8 | Քացախաթթվի նիտրիլ | 70 | 40 |
| 2 018 659 | 88-89-1 | Պիկրինաթթու (⁶) | 0,1 | — |
| 2 020 495 | 91-20-3 | Նավթալին | 50 | 10 |
| 2 027 160 | 98-95-3 | Նիտրոբենզոլ | 5 | 1 |
| 2 035 852 | 108-46-3 | Ռեզորցինոլ (⁶) | 45 | 10 |
| 2 037 163 | 109-89-7 | Երկէթիլամին | 30 | 10 |
| 2 038 099 | 110-86-1 | Պիրիդին (⁶) | 15 | 5 |
| 2 046 969 | 124-38-9 | Ածխաթթու գազ | 9 000 | 5 000 |
| 2 056 343 | 144-62-7 | Օքսալաթթու (⁶) | 1 | — |
| 2 069 923 | 420-04-2 | Ցիանամիդ (⁶) | 2 | — |
| 2 151 373 | 1305-62-0 | Կալցիումի դիհիդրոքսիդ(⁶) | 5 | — |
| 2 152 361 | 1314-56-3 | Դիսֆոսֆորի պենտաօքսիդ (⁶) | 1 | — |
| 2 152 424 | 1314-80-3 | Դիսֆոսֆորի պենտասուլֆիդ (⁶) | 1 | — |
| 2 152 932 | 1319-77-3 | Կրեզոլներ (բոլոր իզոմերները)(⁶) | 22 | 5 |
| 2311 161 | 7440-06-4 | Պլատին (մետաղական)(⁶) | 1 | — |
| 2 314 843 | 7580-67-8 | Լիթիումի հիդրիդ (⁶) | 0,025 | — |
| 2317781 | 7726-95-6 | Բրոմ (⁶) | 0,7 | 0,1 |
| 2 330 603 | 10026-13-8 | Ֆոսֆորի պենտաքլորիդ (⁶) | 1 | — |
| 2 332 710 | 10102-43-9 | Ազոտի մոնօքսիդ | 30 | 25 |
| | 8003-34-7 | Պիրեթրում | 5 | — |
| | | Բարիում (լուծվող միացություններ, որպես Ba) (⁶) | 0,5 | — |
| | | Արծաթ (լուծվող միացություններ, որպես Ag) (⁶) | 0,01 | — |
| | | Անագ (անօրգանական միացություններ, որպես Sn) (⁶) | 2 | — |

(¹) ԳՈՒՔՆԵՑ (Einecs)՝ Գոյություն ունեցող քիմիական նյութերի եվրոպական ցանկ

(²) ՔՆՀՆԾՀ (CAS) Քիմիական նյութերի հակիրճ նկարագրության ծառայության համարը

(³) Չափվում կամ հաշվարկվում է՝ որպես ստանդարտ ընդունելով ութժամյա ժամանակահատվածը:

(•*) մգ/մ³ = միլիգրամ խորանարդ մետր օդում 20 °C ջերմաստիճանում և 101,3 կՊա (760 մմ սնդիկի ճնշում)

0 մլն⁻¹ = օդում ծավալային հաշվարկով միլիոնին ընկած մասը (մլն/մ³):

(⁶) Առկա գիտական տվյալները առողջության վրա ներգործության առումով հատկապես սահմանափակ են: